

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈԹՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 4-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

1) 11.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված նաեւ այն դեպքերում, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սույն օրենքի, հարկային հարաբերությունները կարգավորող այլ օրենքների եւ այլ իրավական ակտերի իմաստով իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու, ինչպես նաեւ սույն հոդվածի երկրորդ մասի երկրորդ, հինգերորդ կետերով, երրորդ մասի առաջին կետով, չորրորդ մասի առաջին եւ երկրորդ կետերով սահմանված դեպքերում հարկ վճարողները ճանաչվում են փոխկապակցված հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հիմք ընդունելով երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները: Սույն հոդվածով սահմանված հիմքերով ընդունված հարկային մարմնի ղեկավարի որոշումը չեղյալ կարող է համարվել միայն դատարանի վճռով:»:

2) 22.1-րդ հոդվածում «Ավելացված արժեքի հարկ (կամ դրան փոխարինող հաստատագրված վճար) վճարողների (այսուհետ սույն հոդվածի իմաստով՝ հարկ վճարողներ)» բառերը փոխարինել «Հարկ վճարողների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» եւ
«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ
Ա. Նռանյանի եւ Ա. Մինասյանի կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

h/h	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
1.	«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 11.1 հոդվածում առաջարկվող լրացումը չի բավարարում ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Օրենքը չի տալիս «տնտեսական շահ» հասկացության սահմանումը, անհասկանալի է 3-րդ անձանցից ստացված տեղեկությունների հիմնավորվածության խնդիրը եւ դրանք հարկային մարմնի ղեկավարի կողմից որպես հիմք ընդունելը: Առաջարկվում է նախագիծը լրացնել «տնտեսական շահ» հասկացության սահմանմամբ, սահմանել 3-րդ անձանցից տեղեկությունների ստացման եւ դրանց հիմնավորվածությունը ստուգելու մեխանիզմը, ինչպես նաեւ ներկայացնել այն չափորոշիչները, որոնց հիման վրա հարկային մարմնի ղեկավարը կարող կայացնել նման որոշում:	Չի ընդունվել: 1) 3-րդ անձանցից տեղեկությունների ստացման մեխանիզմները սահմանված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, իսկ դրանց հիմնավորվածությունը ստուգելու մեխանիզմների սահմանման անհրաժեշտություն, կարծում ենք, չկա, քանի որ տեղեկությունները ներկայացնող 3-րդ անձինք հիմնականում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններ են: 2) «տնտեսական շահ» հասկացությունը եւ հարկային մարմնի ղեկավարի կողմից որոշում կայացնելու համար հիմք հանդիսացող չափորոշիչները նախագծով ամրագրելը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն, որ փորձը ցույց է տալիս, որ տնտեսավարող սուբյեկտների փոխկապակցվածության համար հիմք հանդիսացող չափանիշներն օրենսդրորեն ամրագրելը արդյունավետ չէ, քանի որ միշտ կլինեն այնպիսի դեպքեր, երբ ըստ էության փոխկապակցված տնտեսավարող սուբյեկտները օրենքում ամրագրվող չափանիշներով կարող են չհամարվել փոխկապակցված: Հետեւաբար, առավել նպատակահարմար է օրենքով չսահմանափակել տնտեսավարող սուբյեկտներին փոխկապակցված համարելու շրջանակը եւ այդ փոխկապակցվածությունը գնահատել նաեւ այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները հաստատում են անձանց՝ փոխկապակցված լինելը: